Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Արգելադրված գույքը հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացնելու մասին

«16» մարտ 2022թ. **ք. Վանաձոր**

Հարկադիր կատարումն ապահովող ծառայության Լոռու մարզային բաժնի հարկադիր կատարող, արդարադատության լեյտենանտ Սամվել Դերձյանս, ուսումնասիրելով 16.03.2022թ.-ին վերսկսված թիվ **05337345** կատարողական վարույթի նյութերը՝

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

ՀՀ Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի կողմից 01.08.2019թ.-ին տրված թիվ ԼԴ/4129/02/18 կատարողական թերթի համաձայն պետք է Արտավազդ Հովիկի Մանուկյանից հօգուտ «ՎՏԲ Հայաստան բանկ» ՓԲԸ-ի բռնագանձել 238.413 ՀՀ դրամ և հաշվարկվող տոկոսներ:

Պարտապանից պետք է բռնագանձել նաև բռնագանձման ենթակա գումարի 5 տոկոսը, որպես կատարողական գործողությունների կատարման ծախս:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 28, 28.1 և 43 հոդվածներով և «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 35.1, 35.2, 35.3 և 35.4 հոդվածներով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Պարտապան՝ Արտավազդ Հովիկի Մանուկյանին պատկանող, գրավի առարկա հանդիսացող ներքոնշյալ ոսկյա զարդերը՝

հ/հ	լոտի անվանումը նկարագիրը	գնահատման գինը	մեկնարկային գինը	գույքի քանակը
1.	Ոսկյա թևնոց՝ 500 հարգի, 16.1 գրամ	230.230 ՀՀ դրամ	172.672.5ՀՀ դրամ	գույքի մեկ միավոր
2.	Ոսկյա մատանի՝ 580 հարգի, 4.6 գրամ	76.360 ՀՀ դրամ	57.270 ՀՀ դրամ	գույքի մեկ միավոր
3.	Ոսկյա մատանի՝ 580 հարգի, 2.1 գրամ	34.860 ՀՀ դրամ	26.145 ՀՀ դրամ	գույքի մեկ միավոր
4.	Ոսկյա մատանի՝ 580 հարգի, 3.1 գրամ	51.460 ՀՀ դրամ	38.595 ՀՀ դրամ	գույքի մեկ միավոր
5.	Խաչ՝ 580 հարգի, 1.7 գրամ	28.220 ՀՀ դրամ	21.165 ՀՀ դրամ	գույքի մեկ միավոր
6.	Խաչ՝ 580 հարգի, 2.0 գրամ	33.200 ՀՀ դրամ	24.900 ՀՀ դրամ	գույքի մեկ միավոր

Սույն որոշման կիրառմամբ՝ Հարկադիր կատարումն ապահովող ծառայության աճուրդի էլեկտրոնային կայքի՝ **harkadir.achurd.am** միջոցով:

Digitally signed by DERDZYAN SAMVEL 2407900529
Date: 2022.03.30 17:10:48 AMT

<u>Հարկադիր էլեկտրոնային աճուրդի սկիզբ է սահմանվում «04» մայիս 2022թ.</u>

Որոշման պատճենն ուղարկել կողմերին:

Հարկադիր կատարողի կայացրած որոշումը կարող է բողոքարկվել վերադասության կարգով որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հետո՝ երկամսյա ժամկետում, կամ ՀՀ վարչական դատարան օրենքով սահմանված ժամկետներում:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ հարկադիր կատարողի որոշման բողոքարկումը չի կասեցնում կատարողական գործողությունները:

<u>Ծ Ա Ն Ո Թ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն</u> Յուրաքանչյուր լոտի հարկադիր էլեկտրոնային աճուրդի ավարտի հաշվարկային ժամ է համարվում կայքում տվյալ լոտի վերաբերյալ ծանուցումը հրապարակելու 10-րդ օրվան հաջորդող աշխատանքային օրվա համապատասխան ժամը: Յուրաքանչյուր չկայացած հարկադիր աճուրդից հետո՝ երրորդ աշխատանքային օրը, կայքում զետեղվում է կրկնակի հարկադիր էլեկտրոնային աճուրդի դրված լոտի մասին ծանուցումը:

Եթե աճուրդը չի կայացել գնորդ չլինելու կամ լոտի մեկնարկային գնի հավելում չկատարվելու հիմքերով, ապա հաջորդ հարկադիր աճուրդ կազմակերպելուց վաճառվող լոտի մեկնարկային գինն իջեցվում է նախորդ աճուրդի համար սահմանված մեկնարկային գնի տասը տոկոսի չափով: Եթե աճուրդը չի կայացել գնորդի կողմից լոտի գնման գինը սահմանված ժամկետում չվճարվելու կամ առուվաճառքի պայմանագիրը չստորագրելու հիմքերով, ապա լոտի մեկնարկային գնի իջեցում տեղի չի ունենում:

Տասնհինգերորդ հարկադիր աճուրդը չկայանալու դեպքում հաջորդ աճուրդներում լոտի մեկնարկային գինը չի իջեցվում: Տասնհինգերորդ հարկադիր աճուրդը չկայանալու դեպքում հարկադիր աճուրդի է ներկայացվում նաև պարտապանին պատկանող՝ օրենքով սահմանված նույն հերթում ներառված այլ գույք, իսկ նույն հերթում ներառված գույքերի անբավարարության դեպքում՝ հաջորդ հերթում ներառված այլ գույք:

«Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 35.4 հոդվածի 4–րդ, 5–րդ և 6-րդ մասերի համաձայն երկրորդ և յուրաքանչյուր հերթական աճուրդից հետո, լոտը / գույքը / չվաճառվելու դեպքում պահանջատերը աճուրդի ավարտից հետո երկու աշխատանքային օրվա ընթացքում իրավունք ունի պահանջի դիմաց այն ընդունել այդ աճուրդի մեկնարկային գնով:

Պահանջատերը պահանջի դիմաց լոտը իրեն հանձնելու վերաբերյալ գրավոր պահանջը կարող է ներկայացնել ծառայություն մինչև չկայացած աճուրդից հետո երկրորդ աշխատանքային օրվա ավարտը: Գույքը /լոտը/ պահանջատիրոջը հանձնվում է վերջինիս կողմից կատարողական գործողությունների կատարման ծախսերը վճարելուց, իսկ գույքի /լոտի/ հանձնման կապակցությամբ հարկեր վճարելու պարտականություն առաջանալու դեպքում նաև դրա կատարումը հավաստող փաստաթղթերը ներկայացնելուց հետո:

Հարկադիր կատարող
Արդարադատության լեյտենանտ Ս. Դերձյան